նալուն, գիտական միջոցներ ընձեռելով նրան պրոպագանդա անելու կրօնի դէմ։ Միւս կողմից նա միջոց տուեց հրէական և քրիստոնէական եկեղեցիներից հեռացածներին հետևելու մի ընդհանուր անժամանակ, անպատմական բանականութեան կրօնի, որը տարբեր անհատների և շրջանների մէջ դարձեալ շատ տարբեր է և չի կարողանում մի զօրեղ կրօնական շարժումն յառաջ բերել։ Վերջապէս նա ազդեցութիւն ձեռք բերեց զանազան դաւանութիւնների քրիստոնէական ասուածաբանութեան վրայ և այդպիսով մի բուռն պայքար մղեց ասուածաբանութեան մէջ, մեծ զարկ տուեց նորագոյն քրիստոնէութեանը՝ այնպէս որ այժմ կարելի է խօսել քրիստոնէութեան վերակազմութեան և վերանորոգութեան մասին բոլորովին ուրիշ հիմունքների վրայ, քան թէ մինչև այժմ եղած եկեղեցականն էր։

Որովհետև կրօնը իւր ամբողջ զօրութիւնը ծաւալել կարող է միայն իբրև դրական կրօն, իսկ Եւրոպայում և Ամերիկայում դեռ քրիստոնէութիւնն է միակ իրական կրօնական զօրութիւնը, պէտք է ընդունել, որ քրիստոնէական կրօնի վերակազմութեան համար մատուցած այս ծառայութիւնն է եղել ցարդ կրօնի գիտութեան ամենամեծ գործը։

(Վերջ)։

Երուանդ վարդապետ.

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ*

1. Լև Տոլստոյ, Աղօթք, թարգմ. Էմմ. քահ. Նազարեանց, 1906, Մոսկուա գինն է 5 կոպէկ։
2. Լև Տոլստոյ, Սէր, թարգմ. » » » » Մոսկուա գինն է 8 կոպէկ։
3. Լև Տոլստոյ Սեռային յարաբերութիւն, » » Մոսկուայ գինն է 12 կոպէկ։
4. Պրոֆ. բժիշկ. Լէօ Բուրհերշտէյն, Առողջապահիկ կանոններ բոլոր ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների համար։ Թարգմ. Էմմ. քահ. Նազարեանց. 1906 թ. Մոսկուա, գինն է 75 կ.
5. Յովհաննէս Մալխասեան. Հորոտ—Մորոտ, երրորդ գիրք, Ն. Նախիջևան, 1907 թ.

* Ստացուած գրքերի մասին այսուհետև կանոնաւոր կերպով գրախօսութիւններ կգրուին։